Հավելված
ՀՀ կառավարության 2009 թվականի
մայիսի 21-ի N - Ն որոշման

Ծ Ր Ա Գ Ի Ր- Ժ Ա Մ Ա Ն Ա Կ Ա Ց ՈՒ Յ Ց

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ (ԲԺՇԿԱՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ) ԿԱՆՈՆՆԵՐԻ ՆԵՐԴՐՄԱՆ

NN ը/կ	Միջոցառման անվանումը	Պատասխանատու կատարողները	Կատարման ժամկետը
1	2	3	4
1.	«Հայաստանի Հանրապետության վարչապետի 2008 թվականի հոկտեմբերի 25-ի N 836-Ա որոշման մեջ փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» ՀՀ վարչապետի որոշման նախագիծը ՀՀ վարչապետի հաստատմանը ներկայացնելը	ՀՀ առողջապահության նախարարություն	2009 թ. մայիսի 2-րդ տասնօրյակ
2.	Միջազգային առողջապահական կանոնների ներդրման միջգերատեսչական մասնագիտական աշխատանքային խմբերի ձևավորում՝ ըստ անհրաժեշտության	ՀՀ վարչապետի 2008 թ. հոկտեմբերի 25-ի N 836-Ա որոշմամբ ստեղծված հանձնաժողով	2009 թ.
3.	«Միջազգային առողջապահական կանոնների հարցերով ազգային համակարգող մարմին ճանաչելու և միջազգային առողջապահական կանոնների հարցերով ազգային համակարգող մարմնի լիազորությունները սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	ՀՀ առողջապահության նախարարություն	2009 թ. հունիսի 2-րդ տասնօրյակ

09_567

1	2	3	4
4.	Հանրային առողջությանն առնչվող՝ միջազգային նշանակություն ունեցող երևույթների բացահայտման, գնահատման, արձագանքման կարողությունների ազգային առկա ռեսուրսների գնահատում	ՀՀ առողջապահության նախարարություն ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն ՀՀ գյուղատնտեսության նախարարություն ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարություն ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն ՀՀ էկոնոմիկայի նախարարություն ՀՀ պաշտպանության նախարարություն ՀՀ ֆինանսների նախարարություն ՀՀ կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայություն ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանություն ՀՀ բնապահպանության նախարարություն ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչություն	2009 թ. հունիսի 2-րդ տասնօրյակ

1	2	3	4
		ՀՀ կառավարությանն առընթեր միջուկային անվտանգության կարգավորման պետական կոմիտե ՀՀ տարածքային կառավարման նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտե ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե	
5.	«Ազգային համակարգող մարմնի և Առողջապահության համաշխարհային կազմակերպության հաղորդակցման կետերի միջև կանոնավոր կապի ապահովման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	ՀՀ առողջապահության նախարարություն ՀՀ վարչապետի 2008 թ. հոկտեմբերի 25-ի N 836-Ա որոշմամբ ստեղծված հանձնաժողով	2009 թ. հուլիսի 1-ին տասնօրյակ
6.	«Միջազգային առողջապահական կանոնների ներդրման ռազմավարությունը և միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	ՀՀ առողջապահության նախարարություն ՀՀ վարչապետի 2008 թ. հոկտեմբերի 25-ի N 836-Ա որոշմամբ ստեղծված հանձնաժողով	2009 թ. սեպտեմբերի 2-րդ տասնօրյակ
7.	Միջազգային առողջապահական կանոնների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության ինտերնետային էջում «Միջազգային առողջապահական կանոններ» բաժնի ստեղծում	ՀՀ առողջապահության նախարարություն	2009 թ. սեպտեմբերի 2-րդ տասնօրյակ
8.	«Այլ երկրներին աջակցելու համար ազգային փորձագետների խումբ ձևավորելու մասին» ՀՀ վարչապետի որոշման նախագիծը ՀՀ վարչապետի հաստատմանը ներկայացնելը	ՀՀ վարչապետի 2008 թ. հոկտեմբերի 25-ի N 836-Ա որոշմամբ ստեղծված հանձնաժողով	2009 թ. սեպտեմբեր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Դ. ՍԱՐԳՍՅԱՆ